ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1956 Общественные науки

Դ. Մուրադյան

# ՄԻ ԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*Ռուսական առաջին ռևոլյուցիայի զարգացման ամենաբարձր աստիճանը 1905 թվականի դեկտեմբերյան զինված ապստամբությունն էր։*

*Դեկտեմբերի 9-ին Մոսկվայում սկսված զինված ապստամբության լուրն առնելով, երկրի մի շարք երկաթուղագծերի բանվորների ու ծառայողների հետ, ընդհանուր քաղաքական գործադուլ հայտարարեցին նաև Անդրկովկասյան երկաթուղագծերի բանվորներն ու ծառայողները։*

*Գնացքների երթևեկությունը դադարեց նաև Հայաստանի բոլոր գծամասերում։ Ինչպես հոկտեմբերյան համառուսաստանյան գործադուլի օրերին, այնպես էլ այժմ, այս գործադուլին ամենաակտիվ կերպով մասնակցեցին Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ Ալեքսանդրապոլը միաժամանակ Հայաստանի գործադուլավոր երկաթուղայինների գլխավոր կենտրոնն էր։ Ալեքսանդրապոլում, դեռևս հոկտեմբերյան քաղաքական գործադուլի ժամանակ ստեղծված և բոլշևիկների կողմից ղեկավարվող գործադուլային կոմիտեն նորից ակտիվացրեց իր աշխատանքները։ Կոմիտեն իր վերահսկողությունը հաստատեց ոչ միայն տեղի հանգույցի, այլև Ալեքսանդրապոլ — Կարս, Ալեքսանդրապոլ — Ուլուխանլու — Երևան գծամասերի վրա։ «Գործին կցված հեռագրերից երևում է, — գրված է գործադուլի մասնակիցների դատական արձանագրության մեջ, — որ «Ալեքսանդրապոլի գործադուլային բյուրոն» (կոմիտեն — Դ. Մ.) Ալեքսանդրապոլ — Կարս — Ուլուխանլու Երևան գծերում կենտրոնական օրգան էր և որ վերջին երեք կայարաններում չկային ինքնուրույն կոմիտեներ, այլ՝ Ալեքսանդրապոլի կազմակերպության ներկայացուցիչները միայն...»[1]։*

*Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեն բազմակողմանի և աշխույժ գործունեություն էր ծավալել։ Կոմիտեն դեպոյում և կայարանում ցարական պաշտոնյաներին հեռացնելով, նրանց փոխարինում էր բանվորներով։ Երկաթուղայինները կազմակերպել էին նաև զինված դրուժինաներ, դատարան, փոխօգնության դրամարկղ և այլն։ Գործադուլային կոմիտեն վարձել էր հատուկ շենք, որտեղ տեղի էին ունենում միտինգներ, բանվորական հավաքներ։ Եռանդուն կերպով գործում էր նաև կոմիտեի դատարանը, որը բանվորների մեջ պահպանում էր ռևոլյուցիոն կարգապահություն և միաժամանակ պատիժներ էր սահմանում գործադուլային կոմիտեի որոշումներին չենթարկվողների նկատմամբ։ Այսպես, դատարանը ստիպեց Ալեքսանդրապոլի երկաթուղային դպրոցի տեսուչ Պուզանովին՝ աշխատանքից ազատված պահակին հետ ընդունել։ Դատարանի կողմից պատասխանատվության է ենթարկվում նաև Կարայազ կայարանի պետ Կոլյանկովսկին՝ բանվորների հետ կոպիտ վարվելու համար։ Մի այլ նիստում դատարանը քննելով բան-*

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ 196, թերթ 1։

վոր Ստեփան Վիշնյակովի և նրա կնոջ գործը, նրանց միջև եղած վեճերին վերջ տալու համար պարտադրեց Վիշնյակովին գույքը հավասարապես բաժանել կնոջ հետ։ Սակայն, բացի խրատելուց, նկատողություն անելուց և բոյկոտի ենթարկելուց, դատարանը կարող էր նաև մահվան պատժի ենթարկել, որ նա իրագործում էր պրովակատորների, դավաճանների և կոնտրռևոլյուցիոներների նկատմամբ[1]։

Ալեքսանդրոպոլի գործադուլային կոմիտեի ամենաակտիվ անդամներից և նրա նախագահներից մեկն էր Սարգիս Շահրազյանցը, որը աչքի էր ընկել դեռևս հոկտեմբերյան գործադուլի օրերին։ «Դրավոր փաստերի արձանագրության հետագա ուսումնասիրությունից երևում է,— գրված է Շահրազյանցի դատական գործում,— որ Ալեքսանդրոպոլի գործադուլային կոմիտեից եկող կարգադրությունները հեռագրերի և գրությունների ձևով մեծ մասամբ ստորագրվում էին Շահրազյանցի կողմից, որպես «պարտիայի նախագահ» կամ «կոմիտեի նախագահ»...»[2]։

Շահրազյանցի գործում նշված է, որ նա հանդես էր գալիս միտինգներում, բազմամարդ ժողովներում, կոչ էր անում տապալել ցարին, կառավարությունը և հաստատել ռեսպուբլիկա։ Շահրազյանցը միաժամանակ թարգմանում էր ռուսերեն և վրացերեն լեզուներով ելույթ ունեցող հռետորների ճառերը՝ այդ լեզուներին չտիրապետող հայ բանվորների համար։

Գործադուլի ժամանակ գնացքների երթևեկությունը, սակայն լրիվ չէր դադարել։ Երթևեկող գնացքները տեղափոխում էին գործադուլային կոմիտեի ներկայացուցիչներին, զորացրման ենթակա զինվորներին, երկաթուղային բեռներ, մթերքներ և որոշ սահմանափակ թվով մարդկանց, որոնցից ստացած գումարները տրամադրվում էին գործադուլային կոմիտեին։ Իսկ ցարիզմի կողմից հրահրած հայ-ադրբեջանական ընդհարումների հետևանքով աղքատացած և սովի մատնված բնակչության համար ուղարկվող մթերքները փոխադրվում էին բոլորովին ձրի։ «№№ 330,205 և 291,094 ալյուրով բեռնված վագոնները,— գրված է Ալեքսանդրոպոլի երկաթուղայինների դատական գործին կցված հեռագրի մեջ,— որոնք ուղարկվում են Ղամարլու և նախատեսված են տուժած հայերի համար, տեղափոխվում են ձրի. ՌՍԴՊ դելեգատներ...»[3]։

Դեկտեմբերյան օրերին Ալեքսանդրոպոլում դրության տերը քաղաքի բանվորներն էին, հատկապես երկաթուղայինները։ Բանվորական դրուժինաները երկաթուղային հանգույցում և քաղաքում օրինավոր կարգ էին հաստատել և հսկում էին նրա անթերի կատարմանը։ Փաստորեն, Ալեքսանդրոպոլի գործադուլային կոմիտեն, որ չեզոքացրել էր պետական օրգանների գործունեությունը և վերածվել բանվորների ռևոլյուցիոն իշխանության օրգանի, իրականացնում էր բանվորների դեպուտատների Սովետի ֆունկցիաները։

Վ. Ի. Լենինը խոսելով այն մեծ հեղինակության մասին, որ ունեին մասսաների ռևոլյուցիոն ստեղծագործությամբ ծնված օրգանները, ասում է. «Բանվորական դեպուտատների Սովետները և նրանց նման հիմնարկները

[1] Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 26c, գ. 33, թերթ 127։

[2] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գ. 196, թերթ 48։

[3] Նույն տեղում, թերթ 50։

(գյուղացիական կոմիտեները, երկաթուղային կոմիտեները, զինվորական դեպուտատների Սովետները և այլն) հսկայական և ըստ ամենայնի արժանավոր հեղինակություն են վայելում»[1]։

Կարսում ևս երկաթուղայինները պաշտոնից արձակում էին կայարանապետին և նրա փոխարեն նշանակում բանվորի։ Իսկ Երևանում, երկաթուղային կայարանում հայտարարած գործադուլին մասնակցում է նաև կայարանապետ Վս. Գորսակը՝ դադարեցնելով աշխատանքը[2]։

Մոսկվայում սկսած զինված ապստամբության պարտությունից հետո միայն ցարական կառավարությանը հաջողվեց ճնշել գործադուլային շարժումները երկրում։ Ճնշվեցին նաև երկաթուղային բանվորների գործադուլները։ Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում երկաթուղիները հայտարարեցին ռազմական դրության մեջ։ Բոլոր գործադուլավորները ազատվեցին աշխատանքից և նրանց նկատմամբ սկսվեց ռեպրեսիաների մի ամբողջ շրջան։

Վերջում անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Վրացական ՍՍՌ Կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանված մի հետաքրքիր փաստաթուղթ, որը 1905 թ. դեկտեմբերին տեղի ունեցած Ալեքսանդրոպոլի հանգույցի երկաթուղայինների գործադուլի գլխավոր կազմակերպիչների ցուցակն է՝ նրանց գործունեության համառոտ նկարագրով։

Ոստիկանների ձեռքով կազմված այդ ցուցակի մեջ կան նաև առանձին մարդկանց մասին սխալ, աղավաղված տեղեկություններ, սակայն այն մենք թողնում ենք անփոփոխ, չկասկածելով, իհարկե, որ ընթերցողները այդ փաստաթղթից օգտվելիս կցուցաբերեն համապատասխան քննադատական մոտեցում։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 11, էջ 140։

[2] Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 26, գ. 6, թերթ 278։

# СПИСОК

железнодорожных служащих, привлеченных к дознанию в районе Александрополь—Карс, Эриванской линии Закавказской железной дороги, в качестве обвиняемых по делам политическим

| №№ пп | Фамилия, имя и отчество | В чем обвиняется | Улики против каждого |
|---|---|---|---|
| 1 | Пеленкин Георгий Николаевич | В преступлении, предусмотренном 102 ст. Угол. улож. | Принимал деятельное участие в устройстве последней забастовки и агитировал за продолжение ее; состоял кассиром забастовочного комитета, первый объявил телеграмму о начале забастовки и контролировал от имени комитета поезда. |
| 2 | Абросимов Василий Ефимович | | Состоял членом забастовочного комитета и судьей в том же комитете, на митингах агитировал за забастовку и революцию, разъяснял последнюю в смысле „Долой Николая". |
| 3 | Леонтьев Александр Ефимович | | Главный деятель забастовочного комитета и суда; во время забастовок был начальником станции Александрополь от комитета. |
| 4 | Прохоров Иван Иванович | | Требовал от ставших на работу рабочих и грозил им, чтобы они снова забастовали, если не будут приняты обратно арестованные служащие, и когда рабочие отказались, пошел на водокачку, желая дать тревожный свисток для сбора рабочих на сходку. |
| 5 | Вишняков Гавриил Анисимович | | Состоял членом забастовочного комитета и комитетского суда; грозил рабочим, желавшим стать на работу; был самым главным руководителем забастовки и всего движения на ст. Александрополь, ругал государя императора. |
| 6 | Танасейчук Федор Васильевич | | Был членом забастовочного комитета и суда, собирал деньги на организацию комитета и забастовки, агитировал среди рабочих за забастовку. |
| 7 | Бржезовский Иван Иванович | | Был известным своей деятельностью в предыдущую забастовку, за что и был избран членом забастовочного комитета и сотским над рабочими во время второй забастовки в г. Александрополе, призывал на митингах к вооруженному восстанию. |
| 8 | Варламов Василий Константинович | | Был членом забастовочного комитета и говорил на митингах за революцию. |
| 9 | Линденберг Иван Иванович | | Состоял казначеем забастовочного комитета, говорил на митингах противоправительственные речи и агитировал за забастовку. |
| 10 | Варламов Давид Константинович | | Принимал самое деятельное участие в организации забастовки, состоял членом забастовочного комитета и суда, исполнял должность начальника ст. Александрополь, по назначению от комитета, давал за своей подписью депеши и распоряжался движением поездов во время захвата дороги комитетом; говорил противоправительственные речи на митингах и угрозами заставлял служащих бастовать. На запрос командира Кабардинского полка о вагоне для запасных написал: „Сообщаю вам: вагон будет приготовлен от организации—Варламов". |

| №№ пп. | Фамилия, имя и отчество | В чем обвиняется | Улики против каждого |
|---|---|---|---|
| 11 | Вишняков Павел Анисимович | В преступлении, предусмотренном 102 ст. Угол. улож. | Был членом забастовочного комитета и суда, говорил на митингах противоправительственные речи, угрожал рабочим, ставшим на работы. Объявил на митингах рабочим о переходе дороги в руки народа, разъяснял там же, что революция значит, что царя убить и вместо него выберут кого-либо другого. |
| 12 | Рухадзе Матвей Мерабович | | Состоял членом забастовочного комитета и суда, говорил речи рабочим о том, что России необходима республика и что царя не надо, бил рабочих, желавших работать, и угрозами заставлял прекратить работу. |
| 13 | Браигишвили Василий Шошиевич | | Состояли членами революционного комитета и суда, говорили на митингах речи противоправительственного содержания, грозили непокорным комитету рабочим смертью, требовали забастовки. |
| 14 | Гегенашвили Сардион Гигоевич | | Гегенашвили считался знаменосцем организации, носил красный флаг и числился членом боевой дружины. Гегенашвили ездил в поездах контролером от организации и брал деньги с пассажиров. |
| 15 | Бибилаури Алексей Шионич | | Состоял членом забастовочного комитета и суда, силой заставлял рабочих бросить работы и идти на митинги, говоря на митингах о свержении государя и о введении в России республики, для чего требовал вооруженного восстания, ездил во время забастовки на поездах контролером комитета, убил в октябре 1905 года на сходке слесаря члена русской партии*. 3 января 1906 г. с кинжалом в руках напал на рабочего Юраха с целью убийства, но последний спасся. |
| 16 | Коханов Георгий Михайлович | | Состоял главным агитатором забастовки и организатором революционных речей на митингах, где требовал вооруженного восстания. На митинге ругал государя императора и государыню императрицу Марию Федоровну, ездил контролером комитета в поездах и собирал деньги с пассажиров в пользу комитета. |
| 17 | Прохоров Гавриил Семенович | | Состоял членом комитета и суда, говорил на митингах речи о свержении царя и правительства и об учреждении в России республики, выгонял из депо рабочих, желавших работать. |
| 18 | Гуров Иван Степанович | | Состоял членом забастовочного комитета и суда, агитировал за забастовку. |
| 19 | Ошеров Абрам Яковлевич | | Был председателем забастовочного комитета, говорил на всех митингах речи о свержении царя и об учреждении в России республики, заботился о вооружении рабочих, иногда единогласно судил рабочих. Ездил контролировать поезда от имени организации, играл главную роль в последней забастовке. |

* „Русская партия"—монархическая черносотенная организация—Д. М.

| №№ пп. | Фамилия, имя и отчество | В чем обвиняется | Улики против каждого |
|---|---|---|---|
| 20 | Журули Георгий Александрович | В преступлении, предусмотренном 102 ст. Угол. улож. | Был членом комитета и суда, угрожал рабочим, ставшим на работу, убийством. Большинство свидетелей не упоминает о революционной деятельности Журули. |
| 21 | Чхеидзе Михаил Иосифович | | Поддерживал забастовку, угрожая различного рода насилием желающим работать. |
| 22 | Сванидзе Семен Бежанович | | Состоял членом забастовочного комитета и суда, заведывал по поручению комитета нарядами рабочих на службу и исполнял обязанность начальника депо, говорил на митингах противоправительственные речи. |
| 23 | Котрикадзе Селиван Лукич | | Был одним из главных деятелей комитета, заведывал имуществом на ст. Александрополь, выдавая в поезда свечи, распоряжался телеграфом и был контролером в поездах, говорил на митингах противоправительственные речи, угрожал насилием нежелавшим подчиняться комитету. |
| 24 | Манджигаладзе Владимир Ефимович | | Был членом забастовочного комитета и суда, носил по улице красный флаг, на митингах говорил противоправительственные речи, ездил комитетским контролером на поездах, во время забастовки разносил письменные приказания комитета, 27 февраля с. г. бежал из Александропольской тюрьмы. |
| 25 | Шахбазянц Саркис Айрапетович | | Был одним из главных распорядителей забастовки, состоял председателем забастовочного комитета, в период забастовки распоряжался службами, имеются соответствующие телеграммы за подписью „председатель Шахбазянц". Шахбазянц ныне скрылся, до привлечения к дознанию. |
| 26 | Гургенидзе Александр Иванович | | По показанию свидетеля поддерживал забастовку, угрозами и насилиями. Гургенидзе скрылся до привлечения к дознанию. |

ЦГИА Грузинской ССР, ф. 26с, д. 3, лл. 126—130.